

**Վ.ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ,  
ԿԱԳՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀՀ ԱՎԾ-ն շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ, նրանցից ստացել՝ տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն: 2008թ. ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվել են աշխատանքներ հետևյալ նախագծերի շրջանակներում.

1. Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ՏԱՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն 10» պայմանագրի շրջանակում.

- բիզնես ռեգիստր,
- աշխատանքի վիճակագրություն,
- շինարարության վիճակագրություն,
- ազգային հաշիվներ,
- սարքավորումների ձեռք բերում.

2. ԵՄ/ԹԱՅԵԶՍ գործիքի ներքո. Վիճակագրության համար տարածքային միավորների դասակարգում (ՆԱԹՍ), վիճակագրական ենթակառուցվածք (տվյալների պահպանում և վիճակագրական գաղտնիություն),

3. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ.

- 2008 թ. «ՄՈՆԵԵ» ծրագիր,
- դպրոցական բացակայությունների վերաբերյալ փորձագիտական ուսումնասիրություն,
- «Մանկան բարեկամ ծննդատուն/պոլիկլինիկա նախաձեռնության» գնահատում.

4. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համատեղ.

- Հայաստանում բնակչության ծերացման վերաբերյալ տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություն,
- Տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություն, «Համաճարակաբանական անպտղությունը Հայաստանում»,
- Տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություն «Գենդերային բռնությունները Հայաստանում».

5.«Հայաստանի Հանրապետության և միջազգային զարգացման ընկերակցության միջև» Վիճակագրական գլխավոր ծրագրի մշակումն ու տեխնիկական աջակցություն վիճակագրական կարողությունների նպատակով TF091206 TFSCB դրամաշնորհի համաձայնագիր.

6.«Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ի և ՀՀ ԱՎԾ միջև ստորագրված պայմանագրի շրջանակում.

- «Կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն» ենթածրագիր,

7. Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության ֆինանսավորմամբ Շվեդիայի վիճակագրական ծառայության հետ համագործակցությամբ «Սոցիալական վիճակագրությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում.

1. Հաշմանդամների կենսապայմանների վիճակագրություն,
2. Շրջակա միջավայրի վիճակագրություն,
3. Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր,
4. Ժամանակի օգտագործման հետազոտություն,
5. Սարքավորումների ձեռքբերում:

8. Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն – Պարենի ապահովման ծրագիր.

9. Ասիայի զարգացման բանկ. տարածաշրջանային տեխնիկական օգնության ցուցաբերում. «Ոչ ֆորմալ հատվածի գնահատում»:

2008թ.-ին ՀՀ ԱՎԾ-ն մասնակցել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) հետ կապված աշխատանքներին, որի արդյունքում ՀՀ ԱՎԾ-ն կազմել և մշակել է ՀԶՆ ցուցանիշները և «Հայաստանի ՀԶՆ ցուցանիշները» խորագրով նոր էջ ՀՀ ԱՎԾ կայքում:

2008թ. ՀՀ ԱՎԾ 54 աշխատակից 19 արտասահմանյան երկրում (Դանիա, Ֆրանսիա, Սլովենիայի Հանրապետություն, Շվեյցարիա, Հունգարիա, Մեծ Բրիտանիա/Ուելս, Ավստրիա, Իրանի Իսլամական Հանրապետություն, Լյուքսեմբուրգ, Իտալիա, Ֆիլիպիններ, Իսպանիա, Թայլանդ, Վրաստան, Մակեդոնիայի Հանրապետություն, Ուզբեկստան, Եգիպտոս, Բելառուս) վերապատրաստվել և մասնակցել են տարբեր միջոցառումների հետևյալ թեմաներով՝ վիճակագրության համար տարածքային միավորների դասակարգում, «Մահացության պատճառները Կովկասում և Կենտրոնական Ասիայում» ծրագրի շրջանակում Հայաստանի մահացության ցուցանիշների ուսումնասիրում, տեղեկատվական և համեմատական վերլուծությունների պատրաստում, ուղղակի ներդրումների տվյալների հավաքագրում, մշակում և տարածում, միգրացիայի վիճակագրություն, ազգային հաշիվներ, բիզնես ռեգիստր, շինարարության վիճակագրություն, աշխատանքի վիճակագրություն, վճարային հաշվեկշռի վիճակագրություն, տնային տնտեսությունների և ձեռնարկությունների ընտրանքի մշակում, ազգային հաշիվները համագործակցության զարգացման ենթատեքստով, Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 56-րդ լիակազմ նստաշրջան, աշխատանքի շուկայի տեսություն, ոչ ֆորմալ հատվածի գնահատում, մարդահամարներ և կացարանների հաշվառում, շրջակա միջավայրի վիճակագրություն, տեղեկատվական հանրության գնահատում, եվրոպական բնակչության 2008թ. կոնֆերանս, եռամսյակային ազգային հաշիվների վիճակագրություն, մարդահամարի և հետազոտության միկրոտվյալների տարածում. առավելություններ և մարտահրավերներ, գյուղատնտեսական համատարած հաշվառում, մարդկային ռեսուրսների կառավարում և ուսուցում, տնտեսական գործունեության տեսակների և ըստ գործունեության տեսակների արտադրանքների վիճակագրական դասակարգումներ, շրջակա միջավայրի վերահսկում և

զմահատում, ընտրանքային հետազոտությունների առաջադեմ մեթոդներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, գիտատեխնիկական աշխատանքների վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներ, մարդահամարների և կացարանների հաշվառումներ. քարտեզագրման և տվյալների մշակման միջազգային չափանիշեր և ժամանակակից տեխնոլոգիաներ:

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և հրապարակվել է 7 զեկույց՝ 83 էջ ընդհանուր ծավալով:

2008 թվականին ՀՀ ԱՎԾ 101 աշխատակից մասնակցել է ՀՀ տարածքում /Երևան, Աղվերան/ «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – Հայաստան» Եվրասիա համագործակցության հիմնադրամի ծրագրի, Հայաստանում Բրիտանական խորհրդի, ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալության, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի, ՀՀ ֆինանսների նախարարության, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» ծրագրի, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, Եվրոպական հանձնաժողովի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի, «Եվրոպական շարժումը Հայաստանում» խորհրդի, Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման դեպարտամենտի, Հանրային առողջության հայկական միավորման, Հայաստանի «Տեխնոլոգիական ակադեմիայի», «ՄԱՅԿԸՍՈՒՖԹ» հայաստանյան ներկայացուցչության, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, Համաշխարհային բանկի, «Հայկական սոցիալ-ժողովրդագրական նախաձեռնություն» հասարակական կազմակերպության, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավական հարցերի գլխավոր տնօրինության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված թվով 53 միջոցառումների /աշխատանքային հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ, սեմինարներ, սեմինար-պարապմունքներ, նիստեր, աշխատաժողովներ, ուսուցման դասընթացներ, խորհրդակցություններ, կլոր սեղան-քննարկումներ, կոնֆերանսներ, ֆորումներ/ հետևյալ թեմաներով՝ «Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ-Հայաստան»-ը մեկ տարի անց. առաջընթաց, խոչընդոտներ, անելիքներ, «Աջակցություն Հայաստանում միգրացիոն

քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը» ծրագիր, «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության վարչական կարողությունների գնահատում» հաշվետվություն, մոնիթորինգ և գնահատում, զբաղմունքների դասակարգումներ, աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալությունները Հայաստանում, գյուղատնտեսական համատարած հաշվառում Հայաստանում, ԹՎԽՆԻՆԳ և ԹԱՅԵՔՍ գործիքներ, տեղեկատվության ազատություն հասարակայնության հետ կապերի պատասխանատու քաղաքացիական ծառայողների համար, տուրիզմ, լրագրողների տեղեկատվություն ստանալու իրավունքը, թրաֆիկինգի հարցերով աշխատանքային խումբ, Հայաստանի զբոսաշրջության մրցունակություն, Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների մրցունակություն և ինովացիա, ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի ռեսուրս կենտրոնի և վերանորոգված մասնաշենքի բացման արարողություն, ՀՀ քաղաքացիներին ԵՄ անդամ-երկրներ մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացի դյուրացում, «Տարվա լավագույն եվրոպացին» մրցանակների բաշխման արարողություն, վստահություն պետական կառույցների ու հանրային ծառայությունների հանդեպ, տեղեկատվական համակարգերի անվտանգության հարցեր, ՅուԷՆԴԻԷԼԷՖ ռազմավարական պլանավորում 2010-2014 թթ. համար, Հայաստանի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարության նախագիծ, ծրագրի իրականացման հնգամյա գործողության պլան, ճանապարհային երթևեկության անվտանգության ինստիտուցիոնալ շրջանակ, վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, անցման սոցիալական և ժողովրդագրական գինը (Կարապետյանական ընթերցումներ), համաշխարհային ֆինանսական և տնտեսական ներկա զարգացումները. հնարավոր ազդեցություններ ՀՀ միգրացիոն իրավիճակի վրա, սննդամթերքի գների ճգնաժամի հաղթահարումը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, թրաֆիքինգի զոհերին ցուցաբերվող օժանդակության գնահատում, միգրացիա և զարգացում, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ֆերմերային տնտեսությունների վարման փորձառությունների հետազոտություն. հիմնական հետազոտության արդյունքներ, սննդի շուկայի ուսումնասիրություն և վերլուծություն, ՋԼՄ-ների և մամլո պետական ծառայությունների փոխգործակցությունը ժողովրդավարական հասարակությունում, էներգակիրների և սննդամթերքի գների ճգնաժամի հաղթահարումը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում, անչափահասների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում և «Հայաստանում աշակերտների դպրոցից բացակայությամբ պայմանավորված դպրոցական ռեսուրսների կորուստների վերաբերյալ» ուսումնասիրություններ, գործատուների շրջանում աշխատաշուկայի ընտրանքային հետազոտության արդյունքներ, «Երեխաների իրավունքների կոմպենցիա», ՀՀ-ում թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային ծրագիր, ՀՀ աշխատանքային օրենսդրությունը՝ որպես գենդերային հավասարությանը նպաստող արդյունավետ մեխանիզմ, «Հայաստանի տնտեսական զարգացումներ» 2007 թ. տարեկան զեկույց,

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի երեխաների պաշտպանության ծրագիր, 2008թ. տարեկան ծրագրի վերանայում և 2009թ. ծրագրի պլանավորում, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ծրագրերի համատեղ տարեկան վերանայում, ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի հարցեր, «Տեղեկատվության և մոնիթորինգի համակարգի օպտիմալացման նպատակով ինստիտուցիոնալ և իրավական ներուժի զարգացում Հայաստանում` գլոբալ բնապահպանական կառավարման համար» ծրագիր, ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների դաշնագրի համաձայն ՀՀ երկրորդ զեկույցի պատրաստում, ծրագրային բյուջետավորումը Հայաստանում. առաջընթացն ու հետագա քայլերը, մարդկային թրաֆիքինգի վերաբերյալ ճշգրիտ տվյալների ստացման մեթոդաբանության մշակում, էկոնոմետրիկ մոդելների կիրառությունը. լոջիստիկ և փորձիք մոդելները ԷսՓիԷսԷս փաթեթի կիրառմամբ, 2010թ. կենսաբազմազանության նպատակի ուղղությամբ առաջընթացի ազգային գնահատում, ներառյալ չորրորդ ազգային զեկույցի պատրաստում:

2008 թվականին ՀՀ ԱՎԾ է այցելել 11 հանձնախումբ, 26 փորձագետ Շվեդիայի վիճակագրական ծառայությունից, Արժույթի միջազգային հիմնադրամից, Եվրամիության վիճակագրական ծառայությունից` ՏԱՄԻՍ ծրագրի շրջանակում, Իտալիայի վիճակագրական ծառայությունից և Դանիայի վիճակագրական ծառայությունից` ԹԱՅԵԲՍ ծրագրի միջոցների հաշվին, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ից, Ֆրանսիայի ժողովրդագրական ուսումնասիրությունների ազգային ինստիտուտից, Ասիայի զարգացման բանկից, տեխնիկական և խորհրդատվական օգնություն ցուցաբերելու նպատակով շրջակա միջավայրի վիճակագրության, ստանդարտների և կոդերի պահպանման հաշվետվությունների տվյալների մոդուլների նախապատրաստման, ՏԱՄԻՍ/ԵԶՀ համագործակցության և հետագա համագործակցության ծրագրերի, շինարարության վիճակագրության, տվյալների պահպանման և վիճակագրական գաղտնիության վերաբերյալ Հայաստանի օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը մոտարկման, տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության տվյալների որակի վերանայման, «Մահացության պատճառները Կովկասում և Սիջին Ասիայում» ծրագրի շրջանակում Հայաստանի մահացության ցուցանիշների ուսումնասիրման և վերլուծման, բիզնես ռեգիստրի, ազգային հաշիվների, աշխատանքի վիճակագրության, վիճակագրության համար տարածքային միավորների դասակարգման (ՆԱԹՄ), ոչ ֆորմալ հատվածի գնահատման բնագավառներում:

Բոլոր այցելություններն արդյունավետ էին և դրական ազդեցություն գործեցին ՀՀ ԱՎԾ աշխատանքների հետագա բարելավման և զարգացման վրա:

2008 թվականին ՀՀ ԱՎԾ-ում կազմակերպվել է 9 սեմինար-շնորհանդես` նվիրված վիճակագրության տարբեր բնագավառներին, ՀՀ ԱՎԾ այցելված միջազգային փորձագետների մասնակցությամբ, ինչպես նաև արդի վիճակագրական գործիքակազմի

կիրառման և ստացված ժամանակակից վիճակագրական գրականության շնորհանդեսներ, որոնց՝ ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից այցեմասնակցությունների թիվը կազմել է 242 միավոր:

ՀՀ ԱՎԾ-ն մասնակցել է Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակում ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրի համար վիճակագրության մասով առաջարկությունների փաթեթի մշակմանը և քննարկումներին (բնապահպանական վիճակագրության կատարելագործման, ծրագրի մենեջմենթի, գյուղատնտեսության գների ինդեքսի, գյուղատնտեսական համատարած հաշվառման, գյուղատնտեսության վիճակագրության, բիզնես ռեզիստի կատարելագործման, վիճակագրական դասակարգումների, սպառողական գների ինդեքսի, հետահայաց ժողովրդագրական հետազոտության, ֆինանսական հաշվի մշակման և ներդրման, տնային տնտեսությունների հետազոտության/հանրային ծառայությունների համար բնակչության վճարունակության պահանջարկ - 2 փուլ, ներդրումների վիճակագրության, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, աշխատուժի հետազոտության/աշխատանքային կյանքի որակ/մանկական աշխատուժ, «Հաշիվների եվրոպական համակարգ-95»-ի ներդրման, ընտրանքային հետազոտությունների մեթոդաբանության կատարելագործման, միգրացիայի, արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի, հրապարակումների և վիճակագրական տեղեկատվության տարածման, գիտատեխնիկական աշխատանքների վիճակագրության կատարելագործման, հյուրանոցների և ռեստորանների ծառայությունների, թրաֆիքինգի, ավտոմոբիլային տրանսպորտի, մասնավոր դրամական փոխանցումների, զբոսաշրջության սատելիտային հաշվի գծով):

ՀՀ ԱՎԾ-ն մասնակցել է ԹՎԻՆԻՆԳ գործիքի ներքո նախագիծ-առաջարկների փաթեթի մշակմանը, քննարկումներին և ներկայացրել՝ առաջարկներ հետևյալ թեմաներով՝ սպառողական գների ինդեքս և էներգահաշվեկշռի կազմում, ինչպես նաև մշակել է առաջարկներ հետևյալ թեմաներով՝ ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում. գների ինդեքսի վիճակագրության կատարելագործում, ազգային հաշիվների համակարգում, տվյալների որակի կատարելագործում, բիզնես վիճակագրության կատարելագործում և ազգային վիճակագրական համակարգի կայուն զարգացում. գյուղատնտեսական համատարած հաշվառում, տեղեկատվական հանրության վերաբերյալ վիճակագրություն և էներգահաշվեկշռի կազմում:

ԹԱՅԵԸՍ գործիքի ներքո ՀՀ ԱՎԾ-ն իրականացրել է «Վիճակագրության համար տարածքային միավորների դասակարգում (ՆԱԹՍ)» թեմայով ուսումնական այցելություն և խորհրդատվական առաքելության ընդունելություն, «Տվյալների ապահովություն ու վիճակագրական գաղտնիություն» թեմայով խորհրդատվական առաքելության ընդունելություն, ինչպես նաև մշակել է առաջարկներ հետևյալ թեմաներով. գյուղատնտեսական համատարած հաշվառում, ձկնորսության և ձկնաբուծության ոլորտի վիճակագրություն, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վիճակագրություն, ֆինանսական հաշիվ, վիճակագրական դասակարգումներ,

շինարարության վիճակագրություն, էներգետիկայի վիճակագրություն, տրանսպորտի վիճակագրություն, ծառայությունների վիճակագրություն, տնային տնտեսությունների կենսապայմանների հետազոտություն:

Իրականացվել են բանակցություններ և քննարկումներ Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետների հետ՝ ԹԱՅԵԶՍ գործիքի ներքո «Վիճակագրության համար տարածքային միավորների դասակարգման (ՆԱԹՄ)» մշակման և ներդրման համար ՀՀ-ում իրավիճակը գնահատելու նպատակով՝ Հայաստան այցելության վերաբերյալ, Իտալիայի վիճակագրական ինստիտուտի փորձագետների հետ՝ ԹԱՅԵԶՍ գործիքի ներքո «Տվյալների պահպանում և վիճակագրական գաղտնիություն» թեմայով վերջիններիս՝ Հայաստան առաքելության վերաբերյալ, Ավստրիայի վիճակագրական ծառայության, Նիդերլանդների վիճակագրության բյուրոյի, Բուլղարիայի ազգային վիճակագրական ծառայության, Հունգարիայի վիճակագրական ծառայության, Շվեդիայի վիճակագրական ծառայության, Եվրամիության վիճակագրական ծառայության ներկայացուցիչների հետ՝ ԹԱՅԵԶՍ գործիքի ներքո հետագա համագործակցության հնարավորությունների վերաբերյալ, Համաշխարհային բանկի ներկայացուցչի հետ՝ ՀՀ վիճակագրական համակարգի գլոբալ գնահատման և մաստեր - պլանի մշակման ուղղությամբ, ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցչի հետ՝ Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում (ՄՃՏՀ) ՀՀ նախագահության ընթացքում հնարավոր միջոցառումների անցկացման վերաբերյալ ՀՀ ԱՎԾ առաջարկի՝ «ՄՃՏՀ երկրները թվերով» անվանումով համատեղ ժողովածուի մշակման և հրատարակման վերաբերյալ, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրության բաժնի ներկայացուցչի հետ՝ վիճակագրական համակարգի գլոբալ գնահատման վերաբերյալ, Բուլղարիայի և Սերբիայի ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչների հետ՝ Համաշխարհային բանկի կողմից վիճակագրական ներուժի ամրապնդման համար տրամադրվող դրամաշնորհի ներքո ՀՀ վիճակագրական համակարգի գլոբալ գնահատման և մաստեր-պլանի մշակման ուղղությամբ, ինչպես նաև հետագա համագործակցության նախագծերի և հնարավորությունների վերաբերյալ, Ասիական զարգացման բանկի փորձագետների հետ հետագա համագործակցության հնարավորությունների վերաբերյալ:

2008 թվականին մշակվել են ՀՀ ԱՎԾ և Իրանի վիճակագրական կենտրոնի միջև համագործակցության մասին փոխըմբռնան հուշագրի նախագծի հայերեն և անգլերեն տարբերակները:

ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհուրդի 2008թ. ապրիլի 29-ի կազմակերպական նստաշրջանում Հայաստանն ընտրվել է ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի անդամ՝ 4 տարի ժամկետով՝ սկսած 2009թ. հունվարի 1-ից:

2008 թվականին նախապատրաստվել և մշակվել է ՏԱՄԻՍ ծրագրի «2007թ. երկրի վերաբերյալ զեկույց»-ի անգլերեն տարբերակը (36 էջ):

2008թ. ՀՀ ԱՎԾ-ն իրականացրել է Եվրոստատի «Վիճակագրության և դրա հետ կապված տեղեկատվության հավաքագրում, հիմնավորում և հրատարակում թեկնածու

երկրներից, պոտենցիալ թեկնածու երկրներից և Եվրոպական հարևանության քաղաքականության երկրներից» խորագրով նախագիծը:

2008թ. ՀՀ ԱՎԾ-ն Հայաստանի վիճակագրական համակարգի գործող օրենսդրական դաշտի գնահատման և Եվրամիության օրենսդրությանը համապատասխանեցման մոնիթորինգի իրականացման նպատակով Եվրոստատին օնլայն ռեժիմով տրամադրել է համապատասխան տեղեկատվություն «Տեղեկատվական համակարգի վիճակագրական մենեջմենթ - ՍՄԻՍ+» ծրագրային փաթեթով:

ՀՀ ԱՎԾ միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացրել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ /թվով 1236/: Ստացվել են բազմաթիվ տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և այլ վիճակագրական նյութեր:

2008թ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից լույս է ընծայվել 6 հրապարակում, 1 մամուլի հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 270 հարցումների: 2008թ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 85 պաշտոնական հանդիպումներ, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Տեղեկատվության միջալեռական փոխանակման շրջանակում 2008թ. ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ Միջալեռական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 193 վիճակագրական հարցաթերթեր, որոնցից՝ 32-ը՝ ամսական, 35-ը՝ եռամսյակային և 125-ը՝ տարեկան պարբերականությամբ: Ընդ որում, բոլոր հարցաթերթերը նախատեսված է եղել ներկայացնել էլեկտրոնային տարբերակով: